



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՓԱՓԱԳԵԱՆ

Յանապահ

ՎԻՃԱՊ

ՀՅՈՒՅՈՒՆԻ ՁԻ ՀԱՅՐԱՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԿԱՅՈՒՄ

(ՀՐԱՅՑ)

ԴՐԱՅ ԱՐԱՐԱԿ
ՊԵՏՐՈՍԻ



25428

ԲՈԳՈՒ


Տպարան „Ա. ՐՈՒ”

1903

中華書局影印

የኢትዮጵያ

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Августа 1903 г.



արդ մինչ յաջուղու հայտնաբերությունը չկա լին այս
շատ հայտն պահանջման ու համար ամ այս օճախություն

ՎԻՃԱԿ ԱՌԱՐԱՐ ԱՆԴ ՎԻՃԱԿ
(ՃՐՈՅ)

(፭፻፲፭)

արդյունք ամենի շահագույն է առաջ գալու վեց
առաջարկ մասնաւոր աշխատավոր ակտ է ան-
ձեռնորդ պահանջ անունը **Ա.** բանական առ է:

Վաղուց, երիի դարերից ի վեր, այդ մաքուր
և յորդառատ ջուրը, որ բղխում էր լիոնիերից—գա-
խս էր ոռոգելու ասորութի դաշտերը, դարձնելով
սրանց հարստան անտառներ, պարարս, արդիւնաքեր
սրտեր ու գեղածիծաղ մարդագետիններ:

Քաղաքի նախող մի գիւղ ծաղկում էր ջրի սղելքներին։ Խառասատաններ ու այդիներ զարդարում էին նրանց. երկիրը, լի ցնծութեամբ, արտադրում էր շատ բարիքներ և մարդիկ երջանիկ էին այնաև, հաւասարապէս վայելելով ջրի բաշխածարսութիւնը, հաւասարապէս ճաշակելով նրա արթիւնը։

Պաղուց, գուցէ զարերից ի վեր էր, որ այդ բարուր և յորդասատ ջուրը ոչ ցամաքում էր, ոչ գադարում, ոչ էլ պակասում: Գարնահն յորդանում

էր, մի քիշ պղտորւում, սակայն ապրւայ ամեն եղանակին կար նա, հոսում էր անընդհատ, խաղում ափերի հետ, ոռոգում նրանց:

Բայց դա երկար չը տեսց: Մի օր էլ յանկարծ մի խուլ յուզում առաջացաւ նրա ափերի վրայ, մարդիկ իրար անցան, խմբւեցին, ափը զննելու իջան և սիրաը դող ելած՝ վճռեցին, որ ջուրն սկսել էր նւազել: Թէ սակաւ առ սակաւ, բայց արագ կերպով նւազում էր նա, ափերը թողնում և բոլոր արտերին ու մարդերին ոռոգելու չէր հասնում:

Նկատուել էր այդ: Այդպէս եթէ գնար, մի քանի տարուց յետոյ ջուրը ոչ միայն կէս կարսղ էր լինել, այլև գուցէ բարսովին դադարէր:

Եւ այն ժամանակ, ինչ պիտի լինէր գիւղացիների գրութիւնը: Զէ որ արդէն սկսում էին չորանալ արտերը, բերքը նւազել, այդիները, ջուր չունենալուց, պապակել—խամբել, ծառասամները կորցնում էին աճելու ոյժը և մարդագետիները այլ ևս չէին ժապում առաջւայ նման՝ իրենց թաշանման շրեղ տարածութեամբ:

Ամբողջ երկիրը ոչչահալու էր սպաւենում: Պէտք էր մի ճար մտածել ջրի սպաւելու դէմն առնելու:

Բայց դըս համար, ամենից առաջ, հազկաւոր էր այդ նոր փորձանքի պատճառը որոնել և զանել:

Եւ հաւաքւեցան գիւղացիք խորհսդի, յետոյ բաժանւեցին և լեռներն ելան՝ նախ ջրէ ակսնիքը գտնելու և ապա այն ամեն ճիւղերը հետազոտելու, որոնցից դետը առատանում էր և մեծա-

Մեծ զետ էր. բուն ակը բղխում էր մութ և խոժու ժայռերով բեռնաւորւած լեռան կրծքից, յետոյ, ճանապարհին, մօտ 4—5 տեղ, զանազան սարերից գալով՝ խառնուում էին նրա հետ խոշոր վտակներ և լեռնաշղթայի ստորոտում, խոր ձորակի մէջ, այդ բարովը միացած՝ զնում էին ողոգելու ներքին դաշտերը:

Դիտէմ այդ գիւղացիների խմբերը, որոնք հետազոտութեան ելան: Մի խումբը բռնեց բռնն ակի ճանապարհը, միւսը ձորը մտաւ, մտածելով, որ գուցէ լեռներից մի խոշոր ժայռ գլուխելով փակել էր ընթացքը և փոխել նրա հեղեղաւը: Երկրորդ խումբը բայլեց զիւխաւոր ճիւղն ի վեր դէպի լեռնաշղթայի ծորդորները և երկու միւսները՝ բահերով ու թիերավ զինուած՝ զնացին մաքրելու ճիւղերի միւս ակաները, ենթադրելով որ նոքա լցուել էին աւազով և կամ փուխը բլբակները վլած՝ լցըրել էին նրանց:

Երկար, զաշափի բնակիչները լուրերի սպասելով նկատում էին որ ոչ միայն ջուրը առաջնուայ նման չէր մեծանում, այլ աւելի և աւելի պակասում էր:

Խմբերից շատերը այդ միջոցին, յոդնեցուցիչ, տաժանելի ճանապարհներով քայլեցին վտակներն ի վեր, բայց ոչ մի հողաթումը չէր վլել, ոչ մի ժայռ չէր զիսրել և ջրերի հեղեղաները չէին փօխւել. միայն նկատեցին, որ նոյն խոկ վտակները փոքրացել էին. իսկ թէ որակել էր անհետանում նրանց ջուրը և կամ բնչալէս, ինչ ճանապարհով—դա ոչ ոք իմանալ չը կարողացաւ:

Եւ ասանեհինդօքւայ միծ շրջադայութիւնից յետոյ, բոլոր խմբերը կինարանացան ակունքի մօտ ու խորհրդի նստան:

— Ակներե է, խօսեց մէկը—ջրերը պակասում են վերերից, բայց թէ ինչպէս և կամ ճեր են գնում—մենք այդ իմանալ շկարողացանք:

— Ինձ թւում է, ասաց մի տրիչը—սր վասկների տակ անդունդ է գոյացել և կլանում է ջրերը:

— Պայտաներ պիտի լինէին կամ որ և է աւրիշ նշան—առարկեց մի տրիչը—մինչդեռ աչ մի այդպիսի բան չը կայ, որքան մենք կարաղացանք աշշադութեամբ հետազօտել:

— Ան, չը կայ, բայց կայ այն փաստը, որ ջրերը կլանում են և մի ամբողջ հասարակութեան թողնում ծարաւ:

— Դուքէ անյայտ չարազործներ, ստորերկրեայ, վարպետութեամբ շինած ճանապարհներով գողանում են նրանց. յայտարարեց մի փարձառու գիւղացի:

— Այսպէս բանի նշանն էլ չը կայ, եւ երկար վիճում էին նրանք, թեր ու դէմ կարծիքներ, զանազան ենթադրութիւններ առաջադրում, առաջարկում էին երազային, երեխայական, առ ժամանակեայ միջոցներ. սակայն իսկայն գըտնում, որ զրանցից աչ մէկը երկարաւահ չէր կարող լինել և եթէ նոյն իսկ յաջողութիւն մի տարի, հսկայական ոյժ գործ զնելով ջուրը ամրաբել, դաշտերին բաւականացնել, այնուամենայնիւ ջուրը պակասում էր և կարող էր լիովին դադարիւ:

Եւ երբ այդպէս տար վլձի մէջ էին, յանկարծ

մի երիտառարդ, որ յայտնի էր հայրենակիցների մէջ որպէս այլանդակ մտքեր արտայայտող, ֆանտազիոն և խենթ, զոչեց այն կողմից:

— Լոեցէք թէ ինչ կառեմ ձեղ, նզրայրներ... Մեր ջրերը կլանողը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի վիշապ, որ բուն է զրել այդ լեռներում և հետզհետէ սպառում է մեզ կիանք տւող աղբիւրները... Մի վիշապ է այդ...

Բարձրացաւ մի ընդհանուր քրքիջ, յետոյ ծաղրի կարկռա թափինց խենթի զիսին: Բայց ոա, անվրդո՞ւ գոչում էր անդաղար և հետզհետէ աւելի հաստատուն ու վճռական:

— Կրկնում եմ ձեղ, եղբայրներ, մի վիշապ է այն, որ մտել է մեր լեռների մէջ, շռտով եղած ջուրն էլ կը չորացնի և, պիտի տերնէք, կլանելով պիտի մեծ անայ, ծարաւը պիտի աճի, իսելու փափագը պիտի մեծ անայ և այլ ես ջուր չը զնելով, պիտի զայ մեր արիսնը խմիլու...

Այդպէս խօսեց ինչնթ մարդը և նրա եղբայրները ոչ միայն ծաղրեցին, այլ և նախատեցին նրան, ջանացին լսեցնել, յետոյ ապահուեցին, ծեծեցին և ստիպեցին որ դադարէր յիմարութիւններ ասելուց:

Բայց նա գոչում էր յամառութեամբ:

— Վիշապ է այն, եղբայրներ, ասում եմ ձեղ, քանզիցէք ակունքը և կը տեսնէք. հետազօտեցէք, խոսքերը մտէք և պիտի հասկանաք... ծնել է նա, այս ես եմ ձեղ ասողը, կարճամիտ եղբայրներ... և ծնել է նա մեր միջից, մեղնից...

— Մեզնից է ծնել. զոչեց բարկացած գիւղի հշմանը—ասում են մեղնից... լինթ, տառ տեսներ,

մի յիմարութիւն էլ առա և յայտնիս մեզ թէ ինչ կին է այն, որ վիշապ է ծնում և կամ մրաւելից, ինչու ծնաւ նա:

Ու ծիծաղում էին, որովհետեւ ոչ ոք չէր լսել որ մարդկանցից կարող էր վիշապ ծնել և այդ վիշապը, մի ամբողջ գետ կանելուց յետոյ, կարող էր ենել և մարդկանց արինը խմելու գալ:

— Խօսիր. գոչեցին գիւղացիք խենթին—տեսնենք, գուցէ քո մտյրն է ծնել ալդ երեակայական վիշապին, եթէ միայն նրան ծնողը քո հիւանդ ուղեղը չէ; Խօսիր, ինչից է ծնել նա:

— Եեր քրատինքներից... մըմնջաց խենթը և այնուհետեւ այլ ևս չը խօսեց:

Եւ ինչո՞ւ խօսէր. միմեանց ետեւից միայն այլանգակութիւններ էր ասում: «Քրատինքից ծնած վիշապ»—գա մի այնպիսի խենթային միտք էր, որ հաւերի ծիծաղն անգամ կարող էր շարժել, ինչ մնաց խելքը գլխին, փորձառու, շատ բան տեսած գիւղացիների և պատկասելի իշխանների...»

XX.

Ահա այսպէս էր, որ վիշապի գոյսթեան միտքը ծնաւ մարդկանց մէջ: Թէկ չուրը արդէն կէս էր եղել և սպասում էր շուտով մի առակ դառնալու:

գիւղացիք շարունակիցին ծիծաղել երեակայական վիշապի վրայ և ջրի նւազելը համարում էին բնական որ և է պատճառից առաջացած:

Բայց, «Իսենթը մի քար գլորեց, հաղար իսելօք չը կարողացան հանելոց: Այդպէս էլ եղաւ: Վիշապի միտքը,—որքան որ խելօք մարդիկի ծաղրեցին —մեծացաւ, համակեց ժողովրդեան պակասամիտ դասի միտքը և, տասնեակ տարիներ յետոյ, երբ մեծ ջուրը այլ ևս չնշին առւակ էր դարձել, եթի ծաղկած, քաղաքի նմանող գիւղը կէս եղել և գեղած իծաղ այդիները, գաշտերն ու մարգերը չորացել էին—հազիւ էին գանուռում խենթանման մարդիկ, որոնք վիշապին համարէին ջրի պակասելու, ոչնչանալու մեղաւորը:

Հազիւ էր գանուռում, բայց կար: Որ և է գաղափար շուտ չէ մտնում ամբոխի մէջ, բայց երբ մտնում է, շուտ չէ գուրս գալիս:

Դանւեցան մարդիկ, որոնք վերջի վերջոյ վճռեցին գնալ դէպի ակունքը, փորել խորը մտնել և ստուգել վիշապի գոյութիւնը ու, եթէ կար նա, սպանել և մտնող երկիրը նորից կենդանացնել, նրա վրայի անցեալ եռուն կեռնքը նորից աճեցնել: Եսկ խենթը, որ գեռ կենդանի էր, որ գեռ պնդում էր վիշապի գոյութեան մտսին, յանձն տուաւ նրանց գլուխին անցնել և երկիրը հարստահարողի գէմ կռւի ենել:

Ու ամբողջ գիւղը հետեւ նրանց: Ոմանք, որովհետեւ գնացողների հայրերը կամ եղբայրներն էին, և շատերը՝ որովհետեւ այդ հետագօտութիւնը շատ հետաքրիք էր:

Եւ գնացին նրանք երկար, օրերսպ և շարաթների, հասան ջրի գլխաւոր ականքին—խոժու լիւների, մեծ ժայրերի ստորաբը: Յետոյ բահերն ու րըիչները ցած գրին, և նժաեցին ծրագիրներ կազմելու:

Երբ խենթը տեսաւ որ մարդիկ նստում են ծրագիրներ կազմելու, կանգնեց նրանց մէջ և ասաց.
— Օ, ոչ, եղբայրներ, միշտակէք հանգստանտու, քանի դեռ վիշապը կենդանի է, մի ժողովէք երկար՝ ծրագիրներ մտածելու: Հարցը շատ պարզ է. ծնել է վիշապը, որ կրանում է մեր ջնորդ և մեզ թողնում ծրագաւ. որի ավելի նրա եղած աեղը ենրա զլուխը ջախջախնել: Արանից պարզ ու կարեւէ միջոց շը կայ: . . . Արթի ելքը և գնրծի սկսներ:

— Բայց չէ որ, ասաց մէկը հարկաւոր է: մեզ հաշուի ասնել մեր ոյժերը, տեսնելու թէ կարդղ ենք ջախջախնել վիշապին. զուցէ նա շատ միծ: և զօրեղ է և մեզ բոլորի կարող է կրանի: . . .

— Օ՛, այն, ասաց խենթը—երբ նա նոր էր ծնել՝ նրան սկսնելը շատ աւելի ճեշտ էր. բայց նա ահա երկար ապրեց, սնաւ մեր ջրով, այժմ նրա ստամոքսը աւելի մեծ, կրանսդ քերանը աւելի բայն է զարձել և շատ դժւար է նրան սչնչացնել առանց զոհներ տալու: աստինց արիւն թափելու:

— Տեսնում ես, խօսեց մի դիզացի—օւրիմն մեղ աւելի երկար պէտք է խորհել, ծրագիր կազմել, կաւելու պատրաստել այդ հրէշի դէմ:

— Այն, բայց մինչ գուր կը խորհելի և ծրագիրներ կը կազմէք նա կը զօրեղանայ, ամբողջ ջաւը կը անէ և մեղ բոլորի ծրագաւ կը թողնէ:

Նա աճում և դորեղանում է ժամ առ ժամ, նոյն խոլ րսով և առ բաղէ:

— Ի՞նչ արած, առավելեցին շատերը՝ պիտի խորհել, մասմէելու:

Ու շարունակեցին խորհել, մտածել...

Մնաց խենթը մինակ, նրան չը լսոցին, նրա շատապեցնելը ծիծ ապելի գտան:

Եւ նա մննակ, առան ըրիչն ու րահը, իջու վեսների խորքերը և վինտուեց վիշապին:

Առ գիւղացիր հիւու. նստած, խորհում էին և ժպիար զէմբին՝ դիսում խենթի աշխատութիւնը:

— Եթէ խկանպէս հրէշի կայ դատում էր մէկը— անհամաճառ, իր չնշով անգամ ինի, վարկենապէս կը ոչնչացնի այդ խենթին:

ծիծ ապելի կը լինի տեսնել թէ ինչ պլան- գակ դէմքը պիտի ստանայ խենթը, զէմառ զէմ զալով վիշապին:

Եւ խենթը վորում էր, աշխայժով փորում: Նրա բրիչի հարւած ից զզրում էր լինը, թնդում էր գետինը և ժայռերի խորում լուսում էր խուլ մանչիւն, սրաքանի խենթի հարածները արագանում էին. այսքան մեծամասն էր:

Հրէ չնի է... զունատ ու զողոջուն զօշցին զիսպացիր ևս ես զիարով:

— Զգոյշ լինենք. խրատեց մէկը—աւելի լաւ է հետո կանգնենք և նախ անսնենք թէ ինչպէս կը վարեի այդ խենթի հետ:

— Մի պատառ կանի. զիտեց երկրոսպը:

— Մի վարկենում կը յոշօափ. չէ՞ք լսում թէ ինչ ձայներ են լսում խորքերից:

Եւ իբաւ, մոնշինը սաստկանում էր, զայրալից զանում:

Հրէշը բարկանում էր, որ համարձակուել էին այդպէս խորերը մանել և իրեն անհանգիստ անհնու գալ:

Բայց խենթը պեղաւմ էր. նրա բրիչը ժարուիր էր գէս ու զէն նետում, քարերը վլորում և սուր ծայրովը խոր մզում մինչև հրէշի բնակարանը.

Եւ այսպէս, մինչև երեկոյ, առանց գաղաք առնելու, փորեց խենթը, պեղեց, բրչի հարւածներ տուաւ:

Եւ երբ երեկոյ էր զարձել, վերջին կարծր քարն էր չարդում նա, զրեթէ խլացած տակիցը գուրս նետուզ հրէշային սոնսցներից:

Գիւղացիք սարսափած, գունատ և սրտատրով հեռուից նայում էին արդ բալորին և ոչ ոք սիրտ չ'արաւ մի քայլ անելու, խենթին օգնութեան ձեռք կարկառելու: Ամէն որ իր կաշուց էր վախենում, ամէն ոք կամենում էր վտանգից հեռու լինել, թէկուզ ծարաւ, թշւառ ու կիսամերկ մնալ յետոյ:

Եւ երբ բրչի մի ուժգին ու ծանր հարւածի տակ գլորեց վերջին ժայսը, ահարեկ գիւղացիների առաջ երեաց հրէշի այլանգակ, սոսկալի գլուխը, որ բերանը դէմ էր տեղ բոլոր ջրերին և անկշտում կլանելով, ուռում էր, հաստանում:

Իսկ եթէ դեռ հասում էր նրա կողերով քիչ, չուր, զաէլ նրա բերնից, շրթունքների անկիւններից գուրս ենող աւելցուքն էր միայն, խասն հրէշային գարը լորձինքների հետ:

Հրէշը երբ տեսաւ բրիչը ձեռքին՝ իր զլիսի վե-

լիք կանգնած խենթին, մոնչաց, կովային աշխնը ուրսից զարալից և գոչեց որոտաձայն:

— Հեռու, յանդագն, թէ չէ կը ոչնչացնեմ. քիդ նման խենթերի ես շատ եմ կու տուել այն ժամանականից 'ի վեր, երբ առաջին մարզը ձնշեց միւսին և իմեց նրա ունեցածը, երբ Կայէնը սպանեց Արէլին... Գնա, քանի չեմ փոշիացրել քեզ, անմիտ. քիդ նման խենթերը թէե զանում են ինձ, բայց նրանք չեն կասող ոչնչացնել, այլ միմեան ահա այդ ամրութը, որ այժմ ահարեկ զոգում է ուղրերիս առաջ...

Եւ շարսւնակեց կրանել ջուրը, խենթը բարձրացրեց բրիչը, ուժոնութեամբ օրորեց և բումն թափովնետեց դէպի հրէշի գլուխը:

Բրիչը սուլեց, վնաց քիլթելու քիչ զաղանի զլիի կաշին, բայց աւելի ուժգնութեամբ կպատ կողքի ժայներին, չարդառեց նրանց և հեռում զիտող զիւղացիներից շատերին վիրաւորեց:

Այդ որ տեսան գիւղացիք, զայրացան, յուղւեցին, յետոյ խմբւեցան, քարեր վերցրին և քարկոծեցին խենթին:

Իսկ հրէշը միամեծ քրքիչ արձակեց և տասց.

— Տեսաք, մարդիկ, տեսաք որ այդ խենթերը ինձ դէմ կուելով միմիայն ձեղ են վնասում. քարկոծեցէք այդ տիմարաներին. ձեր թշնամիներն են, ձեղ մոլորեցնողներն են դրանք... Մինչզես նս եմ ձեղ կերակրողը, ձեր քարերարը. Ենրավիսան եկել էք այժմ ինձ խնդրելու, ահա խոստանում եմ որ էլ աւելի քարի կը լինեմ դէպի ձեղ, ծարաւ չեմ թողնի, սրովհետեւ շրթունքներիս անկիւններ ունին և

անկիւններից ձեզ բաւականացնելու, ձեզ ծարաւութիւնից շը մեռցնելու շափ ջուր թափսում է,..

Եւ դիւզայիք գողալով լսեցին հրէշի այդ բարսեիրական խօսքերը, քարկոծեցին, դեռների բարձունքները քշեցին խենթին, յետոյ ծնւնկ չոքած շնորհակալ եղան հրէշից և ուրախ վերադարձան գիւղը:

— Խոսանում եմ, աւելացրել եր հրէշը — ձեզ ծարաւ շը պիտի թողնեմ և շրթունքներիս անկիւնները քիչ աւելի կը բանամ, երբ դուք չափազանց ծարաւութիւն զգաք...

Ու այդ խոսաւում, պիտի խոսանվանուի, մեծ ազնութեամբ, կատարում է նա մինչև այսօր: Ճըրթունքները երբեմն քիչ աւելի է բաց անում, մեղմացնելու համար այն ծարաւիններին, որոնք պատապանքներից պատրաստ էին խենթանալ...

Եյդ օրուանից ամբոխը պատշառում է հրէշին, որպէս բարերարի, շինում է նրա համար տաճարներ, իսկ նրա գէմ խօսող խենթերի՝ քշում դէպի եռների բարձունքները:

Այսաւել կը վերջանար արդէն զբոյցը, Կթէ պէտք շը լինէր մի դէպի էլ պատմել:

Եյդ այն է, որ մի օր յայտնեցան մարզիկ,

որոնք երազ էին տեսել թէ մօտ է, իբր թէ, հրէշի

ոչնչանալու օրը և թէ նրանք երազի մէջ տեսել էին հրէշը սպանողին անգամ:

Ու նկարագրում էին այդ սպանողին, որ իբր թէ մի հուժիու մարդ էր կաշուէ գողնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կուն...

Պատմում էին այդ երազատեսները, որ իբր թէ կաշուէ գողնոցով հսկան մեծ քայլերով զնում էր դէպի հրէշը և որ հրէշը, լսելով նրա քայլերը, կծկում էր և ճգնում աւելի խորը մտնելու... Կարծես վախենում էր...



25428

11

N 1/2 յանձն քանի պատճեն ենում է և ոյլ ազգական
հայության առաջնային առարկա աշխատավոր դժուկ
դրվ ու մերակարգ բար մինչ հաշուազարման մաս
առաջար կացար Հայութ ու բար արևոտ մեծ է ի
մասունք նմ ոյն մազան և խոշանակ զաշատ նար
դրվ ու պահանջանայ բար մինչ նահանար
հայութ խոշանագ նմ մասունք խոցուր Հայութ մի
այս խոշանագ պահանջան պահանջան մասը ու
մասն զազակ մամուն հայութ և ոյլ մասը ու պահանջան

